


«ՍԻՆՈՀԻԴՐՈ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ

Հայաստանյան Մասնաճյուղ

ԿՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ (ՍԹԱ) ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ
ՆԱԽԱԳԻԾ

ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ԳՈՐԾՈՂ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՂԵԿԱՎԱՐ
ԳԱՌ ԳՈՒԻՆՈՒՄ



ԵՐԵՎԱՆ – 2019



Կատարողների ցուցակ՝

Կատարող՝ կազմակերպության բնապահ. մասնագետ – Հ. Թովմասյան

Անկախ փորձագետ՝ Ա. Սաֆարյան

“Ռադուգա” հաշվարկի կատարող՝ Գ. Հարությունյան

ԱՆՆՈՏԱՑԻԱ

Ռեսուրսների օբյեկտ են հանդիսանում «ՍԻՆՈՀԻԴՐՈ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ Հայաստանյան Մասնաճյուղի գործունեության ընթացքում առաջացած արտանետումները:

«ՍԻՆՈՀԻԴՐՈ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ Հայաստանյան Մասնաճյուղը հիմնականում զբաղվում է ճանապարհաշինարարական, վերանորոգման և շահագործման աշխատանքներով: Նշված աշխատանքներն իրականացնելու համար իր ենթակայության տակ ունի ասֆալտբետոնի, բետոնի շաղախի և խճի մանրեցման արտադրություններ:

Արտադրական գործողությունները կատարվում են երկու տարբեր տարացքներում, արտադրական հրապարակ N 1, 2

Ա/Հ- N 1 ունի մթնոլորտ աղտոտող 4 աղբյուրներ, որոնցից արտանետվում են 4 վնասակար նյութեր:

Արտանետումների ընդհանուր քանակը կազմում է 47.100տ/տարի:

Փոշի անօրգանական(SiO_2 20 -70%)	- 31.500 տ./տարի
Ածխածնի օքսիդ	- 9.390 տ./տարի
Ազոտի օքսիդներ(երկօքսիդի հաշվարկով)	- 3.210 տ./տարի
Ածխաջրածիններ	- 3.0 տ./տարի

Հաշվարկները կատարվել են 1000000 մ³/տարի գազի ծախսի, 150000 տ/տարի ասֆալտ-բետոնի և 200000մ³ բետոնի արտադրության համար:

Գումարային հատկության նյութեր չկան:

- Ա/Հ - 2 ունի մթնոլորտն աղտոտող 1 աղբյուր որոնցից արտանետվում է 1 վնասակար նյութ:

Արտանետումների ընդհանուր քանակը կազմում է 12.0 տ/տարի, այդ թվում՝

Փոշի անօրգանական (SiO_2 –20-70%)	- 12.0տ/տարի
--	--------------

Գումարային հատկության նյութեր չկան:

ՍԹԱ նորմատիվներին հասնելու ժամկետը համարվում է հաստատման պահից:

Ընկերության արտանետումները չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, այդ պատճառով արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում: Աղտոտող նյութերի գետնամերձ խտությունները չեն գերազանցում համապատասխան նյութերի ՍԹԽ, դրա համար անհրաժեշտ ծախսեր չի նախատեսված:

Ա/Հ- N 1 Արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք վնասի մեծությունը կազմում է **1494060դրամ**, հաշվարկը տես հավելված 2-ում:

- **Ա/Հ- N 2** արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք վնասի մեծությունը կազմում է - **480000դրամ**, հաշվարկը տես հավելված 2-ում:

- «ՍԻՆՈՀԻԴՐՈ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ Հայաստանյան Մասնաձյուղի փաստացի արտանետումների ցուցանիշների հիման վրա հաշվարկվել է օդի պահանջվող օգտագործումը (ՕՊՕ-ի հաշվարկը հավելված-1), որի արդյունքում պարզվել է, որ`

Ա/Հ- N 1 արտանետումները մեկ տարում գերազանցում են երկու միլիարդ մ³ չափանիշը (**398.38մլրդմ³/տարի**), ուստի արտանետման չափաքանակները կարող են սահմանվել ՍԹԱ նախագծի հիման վրա:

Ա/Հ- N 2 արտանետումները մեկ տարում գերազանցում են երկու միլիարդ մ³ չափանիշը (**120.0մլրդմ³/տարի**), մլրդմ³/տարի), ուստի արտանետման չափաքանակները կարող են սահմանվել ՍԹԱ նախագծի հիման վրա:

Աշխատանքի նպատակն է մշակել մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) նորմատիվների նախագիծը:

ՍԹԱ նորմավորման աշխատանքների իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 27.12.2012թ. “Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին” թիվ 1673-Ն որոշումը:

Աշխատանքում ի մի են բերվել ձեռնարկության գործունեությունից առաջացող մթնոլորտն աղտոտող աղբյուրների արտանետումների որակական և քանակական բնութագրերը:

Ներկա աշխատանքում բերված են աղտոտման աղբյուրների տեխնիկական հետազոտման արդյունքների տվյալները` տեքստային և աղյուսակային տեսքով: Կատարված է մթնոլորտն աղտոտող նյութերի ցրման հաշվարկը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անոտացիա	
1. Ընդհանուր տեղեկություններ կազմակերպության մասին	- 6
2. Տնտեսվարող սուբյեկտի բնութագիրը որպես մթնոլորտային օդն աղտոտող աղբյուր	- 11
3. Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի անվանացանկը	- 14
4. Զարկային արտանետումներ ունեցող աղբյուրների թվարկումը եվ բնութագիրը	- 15
5. ՍԹԱ նորմատիվների հաշվարկի համար աղտոտող նյութերի պարամետրերը	- 16
6. ՍԹԱ նորմատիվների/չափաքանակների հաշվարկի համար անհրաժեշտ ելակետային տվյալները	- 20
7. Վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկը	- 21
8. Վնասակար նյութերի ցրման հաշվարկի հակիրճ արդյունքները	- 22
9. Մթնոլորտ ամենամեծ աղտոտումներ առաջացնող աղբյուրների ցուցակը	- 23
10. ՍԹԱ նորմատիվներ հասնելու միջոցառումների ծրագիր	- 24
11. Անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակներ /արտանետման թույլտվություններ	- 26
12. Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման միջոցառումներ	- 27
13. արտանետումների վերահսկման և ՍԹԱ կատարման նպատակով նախատեսվող և իրականացվող միջոցառումներ	- 28
- Օգտագործված գրականություն	- 35
Հավելվածներ`	
- ՕՊՕ-ի Հաշվարկը ըստ տվյալ ձեռնարկության-հավելված-1	- 29
- Վնասի հատուցման հաշվարկը -հավելված-2	- 31
Ձեռնարկության պլան-սխեման	
Ռելիեֆի գործակիցը	
Կլիմայական տվյալներ	
Ֆոնային աղտոտվածության տվյալներ	
Մեքենայական հաշվարկներ	

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ՍԻՆՈՀԻԴՐՈ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ Հայաստանյան Մասնաճյուղը հիմնականում զբաղվում է ճանապարհաշինարարական, վերանորոգման և շահագործման աշխատանքներով: Նշված աշխատանքներն իրականացնելու համար իր ենթակայության տակ ունի ասֆալտբետոնի, բետոնի շաղախի և խճի մանրեցման արտադրություններ:

Արտադրական գործողությունները կատարվում են երկու տարբեր տարացքներում, արտադրական հրապարակ N 1, 2

Արտադրական հրապարակ N 1 - հիմնականում կատարվում են ասֆալտբետոնի , բետոնի շաղախի պատրաստման և խճի մանրեցման աշխատանքներ, որը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի սկզբնամասում, հեռու բնակելի տարածքից:

Գործունեության հասցեն` ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ

Արտադրական հրապարակ N 2 - հիմնականում կատարվում է խճի մանրեցման աշխատանքներ, որը գտնվում է ՀՀ Շիրակի մարզի Ազատան գյուղի վերջնամասում, հեռու բնակելի տարածքից:

Գործունեության հասցեն` ՀՀ Շիրակի մարզ, գ. Ազատան

Տեղադրված է տեղանքի իրավիճակային քարտեզը, որտեղ երևում է, որ մոտակայքում բացակայում են նախադպրոցական, դպրոցական, կազմակերպություններ, հիվանդանոցներ, սննդի օբյեկտներ, անտառային, գյուղատնտեսական մշակահողեր և այլն:


Պետ.ռեզիստրի գրանցման համարը` 286.065.884850, տրված 18.01.2016թ

Իրավաբանական հասցեն`

ք. Երևան, Ամիրյան 10

Գրասենյակի հասցեն`

ք. Երևան, Սեպուհ 7



ՍԽՆԱԿԱ
 Վնասակար նյութերի արտանետման աղբյուրների
 «ՄԱՍԿՈՒՄԻ ՔՈՐԹՈՒՐՆԵՆՆԱՅՆ ՍՊՈՐՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ
 Հայաստանյան Սամառայրոլ
 Մ 1 : 1000
 Մարտիրոսյանի կրթամարտակ N 1

Քիտումի
 բաղնիք

1
 ՍԽՆԱԿԱ

Բնտրոմի
 հանգույց


100

0

100

200

Տեղանքի իրավիճակային քարտեզ
«ՍԻՆՈՀԻԴՐՈ ՔՈՐՓՈՐեՅՇՆ» ՍՊԸ Հայաստանյան Մասնաճյուղ
Արտարդրական հրապարակ N 1




ՀՀ Շիրակի մարզի ք. Մարալիկ

Ս Ի Շ Մ Ա
Կենտրոնական նյութերի արտաձեռման աղբյուրների
«ՍԻՆՈՇԻՐՈՒ ՔՈՐՓՈՐԱՅՏՆ» ՍՊԸ

Հայաստանյան Մասնաճյուղ

Մ 1 : 1000

Ազատանի խճի ջարդման և մանրեցման հանգույց Արտադրական հրապարակ N 2



Տեղանքի իրավիճակային քարտեզ
«ՍԻՆՈՎԻՐՐԻ ՔՈՐՓՈՐԵՅՆ» ՍՊԸ Հայաստանյան Մասնաճյուղ
Արտարդրական հրապարակ N 2



ՀՀ Շիրակի մարզի գ. Ազատան
Խճի ջարդման և մանրեցման հանգույց

**2. ՏՆՏԵՍԿԱՐՈՂ ՍՈՒՔՅԵԿՏԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ
ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ԱՂՔՈՒՐ**

«ՍԻՆՈՀԻԴՐՈ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ Հայաստանյան Մասնաճյուղը բնութագրվում է որպես առաջատար տեխնոլոգիա և սարքավորումների ունեցող ասֆալտ-բետոնի և բետոնի արտադրություն:

«ՍԻՆՈՀԻԴՐՈ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ Հայաստանյան Մասնաճյուղի արտադրության գործընթացում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հիմնական աղբյուր են հանդիսանում հետևյալ պրոցեսները՝

- ԱՀ- N1 - Ասֆալտ-բետոնի հանգույցը
 - Բիտումի պահպանում, տաքացումը
 - Բետոնի հանգույցը
 - Խճի ջարդման և մանրեցման հանգույցը, իներտ նյութերի կուտակման /ավազ, խիճ/ հրապարակը

- ԱՀ- N2 - Խճի ջարդման և մանրեցման հանգույցը, իներտ նյութերի կուտակման /ավազ, խիճ/ հրապարակը

Արտադրության բնութագիրը՝

- ԱՀ - N1 - Ասֆալտ-բետոնի հանգույցում տեղադրված է ասֆալտ-բետոնի պատրաստման հոսքագիծ՝ VIMATECH CSM 320 մակնիշի, որը նախատեսված է 150000 տ/տարի ասֆալտ-բետոնի արտադրության համար:

Ասֆալտ-բետոնի պատրաստման պրոցեսն ընթանում է հետևյալ փուլերով՝

- Իներտ նյութերի (ավազ, խիճ) բեռնաթափում, խառնում դասակույտերով և նրանց բնական չորացում, որոնք հանդիսանում են փոշու արտանետման հիմնական աղբյուրներից մեկը:
 - Կոնվեյերի միջոցով չափավորվող բունկերից իներտ նյութերը փոխադրվում են չորացնող թմբուկ, որտեղ նրանք տաքացվում են 140-160°C:
 - Տաքացված իներտ նյութերի տեսակավորումն ըստ մասազատիչների շերտավոր էլեվատորի և վիբրացիոն քարմաղի օգնությամբ: Տեսակավորված բաղադրամասերը տեղավորվում են առանձին խցերում:
- Բիտումի տաքացումը և ջրազրկումը կատարվում է գազայրիչի միջոցով ծխախողովակ ունեցող մինչև 130-140°C տաքացված բիտումի առանձին բաքերում: Հալված բիտումը տրվում է խողովակաշարով ասֆալտ-բետոնի կայանքի դոզատոր, տեղի է ունենում բոլոր կոմպոնենտների խառնում: Բիտումի բաքերը /12հատ/ հաշվարկված են որպես աղբյուրների խումբ
- Պատրաստի ասֆալտ-բետոնը բեռնաթափվում է կուտակման բունկեր կամ անմիջապես ավտոինքնաթափերի մեջ:

Իներտ նյութերի տաքացման համար գազի այրման ընթացքում չորացնող թմբուկում առաջանում են տաք ծխագազեր և փոշի, որոնք մտնում են թևքային ֆիլտրեր՝ փոշեհավաք պարկ, որից հետո լցվում է երկրորդային պարկ և լրացուցիչ մաքրվելուց հետո արտանետվում են մթնոլորտ:

Ասֆալտ-բետոնի հանգույցը հիմնականում աշխատում է բնական գազով, որի ծախսը կազմում է - **950000 մ³/տարի (պահեստային վառելիք նախատեսված չի):**

Նշված գործընթացից արտանետվում են՝ անօրգանական փոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, ածխաջրածիններ N 1 աղբյուրից:

- Բիտումի պահպանում, տաքացում

Բիտումի տաքացումը և ջրազրկումը կատարվում է ծխախողովակ ունեցող կաթսայի մեջ, գազայրիչի միջոցով: Գազի ծախսը կազմում է - **50.000մ³/տարի:**

Բիտումի պահեստավորումից և տաքացումից արտանետվում են ածխաջրածիններ, ածխածնի օքսիդ և ազոտի օքսիդներ N 2 աղբյուրից:

Ընդհանուր գազի ծախսը կազմում է - 1000000 մ³/տարի (պահեստային վառելիք նախատեսված չէ):

- **Բետոնի հանգույցում** բետոնի շաղախի պատրաստման արտադրամասը տարեկան արտադրում է - 200000մ³ բետոն:

- **Բետոնի պատրաստման հանգույցը** փակ համակարգ է, որտեղ կատարվում է բետոնի շաղախի ստացման աշխատանքներ, օգտագործելով ցեմենտ, իներտ նյութեր /ավազ, խիճ/, նշված բաղադրամասերը փոխադրիչի միջոցով դոզատորներից տեղափոխվում են բետոնախառնիչ, որտեղ միաժամանակ ցեմենտի պահպանման սիլոսից մղվում է համապատասխան քանակի ցեմենտ, համասեռնվում է ջրով և պատրաստի բետոնը լցվում է մեքենաների մեջ և տեղափոխվում է օգտագործման:

Նշված գործընթացներից արտանետվում է անօրգանական փոշի N 3 աղբյուրից:

Բետոնի պատրաստման գործընթացում արտանետման հիմնական աղբյուրներն են՝ իներտ նյութերի բեռնումը դոզատորներ, ցեմենտի բեռնման - բեռնաթափման ժամանակ տրման խողովակները, սիլոսային բունկերներից և պնևմատիկները:

Նշված գործընթացներից արտանետվում է անօրգանական փոշի:

- Բետոնի հանգույցի վրա տեղադրված է 3 հատ ցեմենտի բունկերներ պահեստավորման յուրաքանչյուր բունկերի տարողությունը 200-500տ. Ցեմենտի բունկերները ապահովված են փոշեռսիչներով: Ջտիչները համակցված տեսակի են, որոնց վրա փոշին նստելուն պես մաքրման համակարգը սկսում է գործել ցիկլոնի սկզբունքով: Մաքրումը կատարվում է սեղմված օդի օգնությամբ կայնական հոսքով, որը թույլ է տալիս փոշուն նորից ընկնի բունկերի մեջ:

- Ջտիչների գումարային արտադրողականությունը կազմում 99.5%:

- *Խճի ջարդման և մանրեցման հանգույցում* տեղադրված են խճի մանրեցման հոսքագիծ՝ խճի ընդունման բունկեր – 1 հատ, կոտորակիչ - 1 հատ, քարմաղ - 1 հատ, որտեղ կատարվում է խճի ջարդում և մանրեցում՝ ըստ պահանջվող ֆրակցիաների և ժապավենային չորս փոխադրիչներով տեղափոխվում են իներտ նյութերի կուտակման հրապարակ:

Նշված գործընթացներից արտանետվում է անօրգանական փոշի հալթակային անկազմակերպ N 4 աղբյուրից:

Փոշու արտանետումները նվազեցնելու համար հաճախ տարածքը ջրում են:

- *Արտանետումների N1.3 աղբյուրները կազմակերպված աղբյուրներ են, որոնք* հազեցած են փոշեգազամաքման սարքավորումներով, թ և քային ֆիլտրներով/Աղյուսակ3/:

Ուստի տեխնոլոգիական և փոշեգազամաքման սարքավորումների արդիականության և տվյալ արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառում տեխնոլոգիական գործընթացին չի նախատեսվում:

- *ԱՀ- N 2 - արտադրության գործընթացում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հիմնական աղբյուր են հանդիսանում՝*

- Խճի ջարդման և մանրեցման հանգույցը

- *Խճի ջարդման և մանրեցման հանգույցում* տեղադրված են խճի մանրեցման հոսքագիծ՝ խճի ընդունման բունկեր – 1 հատ, կոտորակիչ - 1 հատ, քարմաղ - 1 հատ, որտեղ կատարվում է խճի ջարդում և մանրեցում՝ ըստ պահանջվող ֆրակցիաների և ժապավենային չորս փոխադրիչներով տեղափոխվում են իներտ նյութերի կուտակման հրապարակ:

Նշված գործընթացներից արտանետվում է անօրգանական փոշի N 1 աղբյուրից:

Փոշու արտանետումները նվազեցնելու համար հաճախ տարածքը ջրում են:

- *Արտանետման աղբյուրները բաց արտադրական մակերեսներ են, որոնց հազեցումը փոշեորսիչ սարքերով գործնականում անհնար է, ուստի տեխնոլոգիական և փոշեգազամաքման սարքավորումների արդիականության և տվյալ արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառում չի նախատեսվում:*

- Տեխնոլոգիական սարքավորումների քանակը, արտանետման աղբյուրների պարամետրերը, վնասակար նյութերի արտանետումների քանակը և տեսակը բերված են աղյուսակ 3-ում:

Մոտակա տարիների ընթացքում ձեռնարկության տեխնոլոգիական ծավալների փոփոխություններ չեն սպասվում, ուստի աղյուսակ 3 հեռանկար սյունյակը չի լրացվում:

3. ՄՅՆՈՒՈՐՏ ԱՐՏԱՆԵՏԿՈՂ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՆԿԱՆԱՑԱՆԿԸ

ԱՂՅՈՒՄԱԿ 1

Նյութի անվանումը	ՍԹԿ առավելագույն միանվագ մգ/մ ³	Արտանետումները տ/տարի
<i>Արտադրական հրապարակ N 1</i>		
Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	0.3	31.500
Ածխածնի օքսիդ	5.0	9.390
Ազոտի օքսիդներ (երկօքսիդի հաշվարկով)	0.2	3.210
Ածխաջրածիններ	1.0	3.0
<i>Արտադրական հրապարակ N 2</i>		
Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	0.3	12.0

Գումարային հատկության նյութեր չկան:

**4. ՋԱՐԿԱՅԻՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ
ԹՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

ԱՂՅՈՒՍԱԿ 2.

Արտադրամասի (տեղամասի) և աղբյուրների անվանումները	Նյութի անվանումը	Նյութի զարկային արտանետումը գ/զարկ	Արտանետման պարբերական ությունը, (անգամ/ տարի)	Արտանետման տևողությունը, վրկ	Ջարկային արտանետումնե րի տարեկան քանակությունը, տոն.
1	2	3	4	5	6

Տեխնոլոգիական գործընթացից զարկային արտանետումներ չեն առաջանում, այդ պատճառով աղյուսակ 2-ը չի լրացվել:

5. ՍՅԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ

Աղյուսակ 3

արտադրություն, արտադրամաս	Աղտոտող նյութերի առաջացման աղբյուրները	Աշխատա- ժամը տարում		Արտանե- ման աղբյուր-ների անվանումը		Աղբյուր ների քանակը		Աղբյուրի կարգա- թիվը			
		Անվանումը	Քանակը								
		ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Արտադրական հրապարակ N 1											
Ասֆալտ-բետոնի հանգույց	Նախ.դոզավորման բունկերներ	3				խողո- վակ		1		1	
	ժապ. փոխադրիչ	2		3600							
	չորացնող թմբուկ	1									
	քարմաղ	1									
	խառնարան	1									
Բիտումի պահպանման, տաքացման հանգույց	Բիտումի բաքեր գազայրիչներով	12		2120		խողո- վակ		1		2	
Բետոնի պատրաստման հանգույց	Դոզատորներ	3				խողո- վակ		1			
	ժապ.փոխադրիչ	2		3600							
	Բետոնախառնիչ	1									3
	Ցեմենտի բունկեր	3									
Խճի ջարդման և մանրեցման հանգույց	Իներտ նյութերի ընդունման բունկեր	1				անկազ- մակերպ		1		4	
	Կոտորակիչ	1		3600							
	Քարմաղ	1									
	ժապ. փոխադրիչ	4									
	Իներտ նյութերի կուտակման հրապարակ	2									
Արտադրական հրապարակ N 2											
Խճի ջարդման և մանրեցման հանգույց	Իներտ նյութերի ընդունման բունկեր	1		2400		անկազ- մակերպ		1		1	
	Կոտորակիչ	1									
	Քարմաղ	1									
	ժապ. փոխադրիչ	4									
	իններտ նյութերի կուտ. հրապարակ	2									

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Աղբյուրի բարձրությունը, մ		Տրամագիծը, մ		Գազաօդային խառնուրդի պարամետրերը արտանետման աղբյուրի ելքում					
						արագությունը մ/վրկ		ծավալը մ ³ /վրկ		ջերմաստիճանը	
ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ
11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
<i>Արտադրական հրապարակ N 1</i>											
1		27		1.0		8.5		6.67		140	
2		6		0.3		28.6		2.02		100	
3		20		0.80		15.60		7.84		20	
4		6		80		4.0		20106.2		20	
<i>Արտադրական հրապարակ N 2</i>											
1		5		100		3.0		23562.0		20	

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Կոորդինատները քարտեզում, մ				Գագերը մաքրող սարքերի անվանումը	Մաքրվող նյութերը	Մաքրման միջին շահագործման աստիճանը	
		կետային աղբյուրի, աղբյուրների խմբի կենտրոնի կամ գծային աղբ. 1-ին ծայրի		գծային աղբյուրի 2 -րդ ծայրի			Ապահովվածության գործակիցը %	Մաքրման առավելագույն չափը, %	
<i>ՆԿ</i>	<i><</i>	<i>X₁</i>	<i>Y₁</i>	<i>X₂</i>	<i>Y₂</i>	<i>ՆԿ</i>	<i><</i>	<i>ՆԿ</i>	<i><</i>
<i>Արտադրական հրապարակ N 1</i>									
1		78	40	-	-	փոշեռսիչ երկաստիճանի ֆիլտրեր /պարկ/	100		92
2		85	63	-	-				
3		140	33	-	-	Համակցված թևքային գտիչներ	100		98
4		120	50	200	130				
<i>Արտադրական հրապարակ N 2</i>									
1		55	60	155	160				

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը	Նյութի անվանումը	Աղտոտող նյութերի արտանետումները						ԱԹԱ հասնելու տարին
		ՆՎ			Հ (ՍԹԱ)			
		գ/վրկ	մգ/մ ³	տ/տարի	գ/վրկ	մգ/մ ³	տ/տարի	
Արտադրական հրապարակ N 1								
1	Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	0.494	74.0	6.400	0.494	74.0	6.400	2019
	Ածխածնի օքսիդ	0.689	103.21	8.920	0.689	103.21	8.920	
	Ազոտի օքսիդներ	0.236	35.35	3.050	0.236	35.35	3.050	
	Ածխաջրածիններ	0.166	24.87	2.150	0.166	24.87	2.150	
2	Ածխածնի օքսիդ	0.062	30.67	0.470	0.062	30.67	0.470	2019
	Ազոտի օքսիդներ	0.021	10.39	0.160	0.021	10.39	0.160	
	Ածխաջրածիններ	0.112	55.40	0.850	0.112	55.40	0.850	
3	Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	0.294	37.49	3.800	0.294	37.49	3.800	2019
4	Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	1.644	0.08	21.300	1.644	0.08	21.300	2019
Արտադրական հրապարակ N 2								
1	Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	1.400	0.06	12.0	1.400	0.06	12.0	2019

ՆՎ՝ ներկա վիճակ, Հ՝ հեռանկար

**6. ՍԹԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ /ԶԱՓԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

Կատարվել է մթնոլորտն աղտոտող նյութերի աղբյուրների գույքագրում: Ըստ գույքագրման արդյունքի ՍԹԱ հաշվարկի ելակետային տվյալները կազմվել և հաշվարկվել են ГОСТ 17.2.3.02-78- ին համապատասխան և բերված են 3 աղյուսակում: Հաշվարկները կատարվել են «Տարբեր արտադրությունների կողմից մթնոլորտն աղտոտող նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդիկան» ժողովածուի հիման վրա:

Նստեցման անչափելի գործակիցն ընդունվել է՝ գազանման վնասակար նյութերի և մանր դիսպերսության փոշու համար, որոնց նստեցման կարգավորված արագությունը չի գերազանցում 3-5 սմ/վրկ՝ 1, խոշոր դիսպերսության փոշու համար մաքրման բացակայության դեպքում՝ 3, մաքրման դեպքում՝ 2:

7. ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՑՐՄԱՆ

ՀԱՇՎԱՐԿԸ

Մթնոլորտում վնասակար նյութերի ցրվածության հաշվարկները կատարելու համար ճշգրտված և ուղղված տվյալների հիման վրա կազմվել են ՍԹԱ հաշվարկի ելակետային տվյալները:

Վնասակար նյութերով մթնոլորտի աղտոտվածության հաշվարկը կատարվել է «Ռադուգա» մեքենայական ծրագրով, որը առաջարկված է օգտագործման նախկին ԽՍՀՄ Հիդրոմետ Պետական Վարչության կողմից:

Գետնամերձ խտությունների բաշխման որոշումը կատարվել է 1000 × 1000մ քառակուսում, 100մ քայլով:

ՕՂԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ ՈՐՈՆՔ ԲՆՈՐՈՇՈՒՄ ԵՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՄԹՆՈՒՈՐՏՈՒՄ ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՑՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ցրման պայմանները որոշող օդերևութաբանական բնութագրերը և գործակիցները ներկայացված են ստորև բերված աղյուսակում: Սահմանային թույլատրելի առավելագույն միանվագ կոնցենտրացիաները վերցված են ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ հաստատված ցանկից:

Աղյուսակ 4

ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՐԺԵՔԸ Ա/Հ-1.2
Մթնոլորտի շերտադասավորությունից կախված գործակիցը, A	200
Տեղանքի ռելյեֆի գործակիցը	1.25
Տարվա ամենաշոգ ամսվա միջին ջերմաստիճանը T °C	28.0
Միջին տարեկան «քամիների վարդը» % -ով	
Հյուսիս	19
Հյուսիս-արևելք	40
Արևելք	13
Հարավ-արևելք	2
Հարավ	5
Հարավ-արևմուտք	8
Արևմուտք	6
Հյուսիս-արևմուտք	7
Քանու արագությունը, (բազմամյա տվյալների միջինը),որի գերազանցման կրկնությունը կազմում է 5% մ/վրկ	7 մ/վրկ

8. ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՑՐԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱԿԻՐՃ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մթնոլորտում վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկի արդյունքները ներկա վիճակի և հեռանկարի համար ցույց են տալիս, որ սահմանային թույլատրելի խտության գերազանցում չի դիտվում ոչ մի նյութի համար, այդ իսկ պատճառով վնասակար նյութերի համար սահմանված նորմատիվները առաջարկվում է ընդունել որպես ՍԹԱ :

Ձեռնարկության արտանետումները տվյալ տեղանքի ֆոնային աղտոտվածության հետ չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, այդ պատճառով արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում:

Հաշվարկների վերլուծության հիման վրա առաջարկվում է բոլոր նյութերի համար նախատեսված արտանետումները ընդունել որպես սահմանային թույլատրելի. տես աղյուսակ 4.1, 5.:

ԱՀ -1. 2 ֆոնային աղտոտվածության տվյալները վերցվել են ՀՀ բնապահպանության նախարարության կայք էջից՝ ըստ բնակչության թվաքանակի կատարված հաշվարկի՝ փոշի - 0.2 մգ/մ^3 , (փոշու ֆոնի տվյալները ներկայացված է 0.5 մգ/մ^3 ՍԹԿ ունեցող չտարբերակված փոշիների՝ այսինքն կախված մասնիկների համար), ազոտի երկօքսիդ- 0.008 մգ/մ^3 , ածխածնի օքսիդ - 0.4 մգ/մ^3 ,

**9. ՄԹՆՈՒՈՐՏԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՑՆՈՂ
ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ**

Աղյուսակ 4.1

Նյութի անվանումը	Առավելագույն գետնամերձ խտությունը մգ/մ ³		Աղբյուրի կարգաթիվը	Ներդրումը %		Արտադրամաս, տեղամաս
	առանց ֆոնի	ֆոնով		առանց ֆոնի	ֆոնով	
1	2	3	4	5	6	7
Արտադրական հրապարակ N 1						
Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	0.074	-	3	97.77	-	Բետոնի պատրաստման հանգույց
Ածխածնի օքսիդ	0.043	0.443	1	52.72	5.12	Ասֆալտ-բետոնի հանգույց
Ազոտի օքսիդներ (երկօքսիդի հաշվարկով)	0.015	0.023	1	53.02	34.31	-//-
Ածխաջրածիններ	0.049	-	2	92.32	-	Բիտումի պահպանման, տաքացման հանգույց
Արտադրական հրապարակ N 2						
Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	0.002	-	1	100	-	Խճի ջարդման և մանրեցման հանգույց

Ձեռնարկության արտանետումները տվյալ տեղանքի ֆոնային աղտոտվածության հետ չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, այդ պատճառով արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում: Աղտոտող նյութերի գետնամերձ խտությունները չեն գերազանցում համապատասխան նյութերի ՍԹԽ:

10. ՄՁԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ ՀԱՄԱՆՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Աղյուսակ 5

N N ը / կ	Միջոցառման անվանումը և աղտոտման աղբյուրի համարը	Իրականաց- ման ժամկետը	Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը մինչև միջոցառումը		Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը իրականացնելուց հետո	
			գ/վրկ	տ/տարի	գ/վրկ	տ/տարի

Արտադրական հրապարակ N 1

ՓՈՇԻ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ (SiO₂ 20 -70%)

1	1	2019	0.494	6.400	0.494	6.400
2	3	2019	0.294	3.800	0.294	3.800
3	4	2019	1.644	21.300	1.644	21.300
	Ընդամենը	2019	2.432	31.500	2.432	31.500

ԱԾԽԱԾՆԻ ՕՔՍԻԴ

1	1	2019	0.689	8.920	0.689	8.920
2	2	2019	0.062	0.470	0.062	0.470
	Ընդամենը	2019	0.751	9.390	0.751	9.390

ԱԶՈՏԻ ՕՔՍԻԴՆԵՐ
(երկօքսիդի հաշվարկով)

1	1	2019	0.236	3.050	0.236	3.050
2	2	2019	0.021	0.160	0.021	0.160
	Ընդամենը	2019	0.257	3.210	0.257	3.210

ԱԾԽԱԶՐԱԾԻՆՆԵՐ

1	1	2019	0.166	2.150	0.166	2.150
2	2	2019	0.112	0.850	0.112	0.850
	Ընդամենը	2019	0.278	3.0	0.278	3.0

Արտադրական հրապարակ N 2

ՓՈՇԻ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ (SiO₂ 20 -70%)

<i>1</i>	<i>1</i>	<i>2019</i>	<i>1.400</i>	<i>12.0</i>	<i>1.400</i>	<i>12.0</i>
----------	----------	-------------	--------------	-------------	--------------	-------------

Քանի որ արտանետումները չեն առաջացնում գերնորմատիվային աղտոտվածություն, չի նախատեսվում արտանետումների նվազեցմանն ուղղված միջոցառումներ, աղյուսակ 5-ը լրացվում է համաձայն փաստացի չափաքանակների, որոնք առաջարկվում են որպես ՍԹԱ նորմատիվներ:

11. ԱՆՇԱՐԺ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻՑ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐ ՄԹՆՈՒՈՐՑ ԱՐՏԱՆԵՏԵԼՈՒ
 «ՍԻՆՈՀԻՂՐՈ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ Հայաստանյան Մասնաճյուղի
 ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ/ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՂՅՈՒՍԱԿ 6.

Աղտոտող նյութը	Ընդհանուր արտանետումները	
	գ/վրկ	տ/տարի
<i>Արտադրական հրապարակ N 1 ՀՀ Շիրակի մարզ, ք. Մարալիկ</i>		
Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	2.432	31.500
Ածխածնի օքսիդ	0.751	9.390
Ազոտի օքսիդներ (երկօքսիդի հաշվարկով)	0.257	3.210
Ածխաջրածիններ	0.278	3.0
<i>Արտադրական հրապարակ N 2 ՀՀ Շիրակի մարզ, գ. Ազատան</i>		
Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	1.400	12.0

**12. ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

Անբարենպաստ եղանակի դեպքում արտանետումների կարգավորման միջոցառումները կրում են կազմակերպչական-տեխնիկական բնույթ և գործնականորեն ընդգրկում են վնասակար նյութերի արտանետումների բոլոր աղբյուրները:

1. Թույլ չտալ սարքավորման գերբեռնված աշխատանք
2. Խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին
3. Չբեռնավորել և չդատարկել լուծիչներ և հեշտ բոցավառվող բռնկվող նյութեր
4. Սահմանափակել վառելիքի մատակարարումը
5. Սահմանափակել փոշու արտանետումը

6. Վնասակար նյութերի արտանետումների քանակի մեծացման դեպքում հարկ է անմիջապես դանդաղեցնել կամ ժամանակավորապես դադարեցնել տվյալ սարքավորման աշխատանքը:

13. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ՍԹԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Քանի որ ՍԹԱ կատարման համար պատասխանատու է ձեռնարկությունը, արտանետումներին հետևում և ստուգում է բնության պահպանության համար պատասխանատու անձը:

Վնասակար նյութերի արտանետումների քանակը որոշվում է այդ վնասակար նյութերի խտությունների և գազերի օդային խառնուրդների ծավալների ուղղակի չափման մեթոդներով: Ուղղակի չափման մեթոդների անհնարինության դեպքում թույլատրվում է տեսական հաշվարկի մեթոդը: Տվյալ դեպքում օգտագործվել է տեսական հաշվարկի մեթոդը:

Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ, բնակչության առողջության համար վնասաբեր մթնոլորտի աղտոտման ընթացքում ձեռնարկությունը պարտավոր է վնասակար նյութերի արտանետումները իջեցնել ընդհուպ մինչև աշխատանքի դադարեցումը:

Եթե վթարի արդյունքում ՍԹԱ -ի նորմատիվը գերազանցվում է, ձեռնարկությունը պարտավոր է այդ մասին հայտնել մթնոլորտի պահպանությունը վերահսկող մարմնին և անհապաղ միջոցներ ձեռնարկել վնասակար նյութերի արտանետումները սահմանափակելու ուղղությամբ, ինչպես նաև «ՀՀ ԱՆ Առողջապահական տեսչական մարմին» տեղեկատվություն հաղորդել վթարի և ձեռնարկված միջոցառումների մասին:

**«ՍԻՆՈՀԻՂՐՈ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ Հայաստանյան Մասնաձյուղի
ՕՊՕ-ի ՀԱՇՎԱՐԿԸ**

Սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվները սահմանվում են այն արտանետման աղբյուրների կամ դրանց խմբերի համար, որոնց արտանետումների առավելագույն նախագծային ցուցանիշների հիման վրա հաշվարկված օդի պահանջվող օգտագործումը մեկ տարում գերազանցում է երկու միլիարդ խորանարդ մետր չափանիշը կամ վայրկյանում գերազանցում է երկու հազար խորանարդ մետր չափանիշը:

Այն կազմակերպությունները, որոնք ունեն մթնոլորտային արտանետումների անշարժ աղբյուրներ, և նրանց նախագծային առավելագույն արտանետումները պետք է բավարարեն հետևյալ պայմանը՝

$$\text{ՕՊՕ տարեկան} = \sum \frac{nU_i}{i \text{ ՍԹԿ}_i} > 2 \text{ մլրդ խոր. մ/տարի, որտեղ՝}$$

ՕՊՕ տարեկան-ը օդի պահանջվող օգտագործումն է՝ տարեկան կտրվածքով,

- Աi-ն i-րդ նյութի տարեկան առավելագույն արտանետումն է՝ ըստ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից հաստատված սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծի կամ տեխնոլոգիական ռեգլամենտի՝ մգ/տարի,

- ՍԹԿi-ն i-րդ նյութի միջին օրական սահմանային թույլատրելի խտությունն է՝ մգ/խոր. մ:

Ա/Հ-N-1 –ի համար ՕՊՕ-ն հաշվարկվել է՝

- **Անօրգանական փոշու համար՝** ՍԹԿ-ի միջին օրեկա 0.1մգ/մ³, իսկ տվյալ նյութի առավելագույն արտանետումը կազմում է **31.500տ/տարի:**

- **Ածխածնի օքսիդի համար՝** ՍԹԿ-ի միջին օրեկա 3 մգ/մ³, իսկ տվյալ նյութի առավելագույն արտանետումը կազմում է **9.390տ/տարի:**

- **Ազոտի օքսիդների (երկօքսիդի հաշվարկով) համար՝** ՍԹԿ-ի միջին օրեկանը 0.04 մգ/մ³, իսկ տվյալ նյութի առավելագույն արտանետումը կազմում է **3.210տ/տարի:**

- **Ածխաջրածինները** ՍԹԿ-ի միջին օրեկա չունեն, հաշվարկում չի ընդգրկվել:

$$\text{ՕՊՕ} = (31.500 \times 10^9) : 0.1 + (9.390 \times 10^9) : 3 + (3.210 \times 10^9) : 0.04 = 398.38 \text{ մլրդ մ}^3\text{/տարի}$$

ՕՊՕ-ն գերազանցում է 2 մլրդ/մ³ շեմը (**398.38 մլրդ մ³/տարի**), ապա ընկերությունը պետք է մշակի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվներ՝ արտանետման աղբյուրների կամ դրանց խմբերի համար:

Ա/Հ-N-2 –ի համար ՕՊՕ-ն հաշվարկվել է՝

- Անօրգանական փոշու համար՝ ՍԹՆ-ի միջին օրեկա 0.1 մգ/մ^3 , իսկ տվյալ նյութի առավելագույն արտանետումը կազմում է **12.0 տ/տարի**:

$$\text{ՕՊՕ} = (12.0 \times 10^9) : 0.1 = 120.0 \text{ մլրդմ}^3/\text{տարի}$$

ՕՊՕ-ն գերազանցում է 2 մլրդ/մ³ շեմը (**120.0 մլրդմ³/տարի**), ապա ընկերությունը պետք է մշակի ահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվներ՝ արտանետման աղբյուրների կամ դրանց խմբերի համար:

«ՍԻՆՈՎԻՂՐՈ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ Հայաստանյան Մասնաճյուղի գործունեությունից արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք վնասի մեծության հաշվարկ

Համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի, բնությանը հասցված վնասի հատուցման հաշվարկը կատարվում է համաձայն «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգի», հաստատված 21.01.2005թ. թիվ N 91-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ,

«ՍԻՆՈՎԻՂՐՈ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ Հայաստանյան Մասնաճյուղի կողմից հասցված վնասի մեծության հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով`

$$Ա1 = Շգ \cdot \Phi g \cdot \sum \Phi_1 \cdot \Psi_1$$

որտեղ`

Շգ - աղտոտող աղբյուրի շրջապատի գործակիցն է` - 4

Փg - փոխանցման գործակիցն է` - 1000 դրամ

Ψ₁ – նյութի համեմատական վնասակարության մեծությունն է` փոշի անօրգանական - 10

Φ₁ – տվյալ նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը հաշվում են հետևյալ բանաձևով`

$$\Phi_1 = q \cdot / 3S_{ա2} - 2U_{ԹԱ} /$$

որտեղ`

q - անշարժ աղբյուրների համար – 1

S_ա - տվյալ նյութի արտանետման քանակն է

«ՍԻՆՈՎԻՂՐՈ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ Հայաստանյան Մասնաճյուղի արտանետումներով տնտեսությանը հասցված վնասի հաշվարկը բերված է աղյուսակում Արտադրական հրապարակ N 1

Նյութի անվանումը	Φ ₁ տոննա	Շգ	Փg դրամ	Ψ ₁	Ա դրամ
Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	31.500	4	1000	10	1260000
Ածխածնի օքսիդ	9.390	4	1000	1	37560
Ազոտի օքսիդներ	3.210	4	1000	12,5	160500
Ածխաջրածիններ	3.0	4	1000	3	36000
Ընդամենը					1494060

Արտադրական հրապարակ N 2

Նյութի անվանումը	Φ ₁ տոննա	Շգ	Փg դրամ	Ψ ₁	Ա դրամ
Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	12.0	4	1000	10	480000
Ընդամենը					480000

ՌԵԼԻԵՖԻ ԳՈՐԾԱԿՑԻ ՀԱՇՎԱՐԿ

«ՍԻՆՈՀԻԴՐՈ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ Հայաստանյան Մասնաճյուղի
Արտադրական հրապարակ N 1

Ռելեֆի գործակիցը որոշվում է՝

$H = 27$ մ - արտանետման ամենաբարձր աղբյուրը

$H_0 = 200$ մ - տեղանքի բարձրությունը

$X_0 = 2400$ մ - արգելքի կենտրոնից մինչ ձեռնարկություն ընկած
հեռավորությունը

φ_1 - արգելքի եզրի կիսաքայլը

$a_0 = 2000$

Ռելեֆի գործակիցը որոշվում է՝

$$\eta = 1 + \varphi_1 (\eta_m - 1)$$

Գտնել n_1 և արժեքները

$$n_1 = h : H_0 = 27 : 200 = 0,135 \quad n_1 < 0,5$$

$$n_2 = a_0 : H_0 = 2000 : 200 = 10$$

$$n_2 = 10 \quad \text{դեպքում համաձայն աղյուսակի գտնում ենք՝ } \eta = 1,5$$

φ_1 –ը որոշվում է X_0 / a_0 հարաբերությամբ

$$X_0 / a_0 = 2400 : 2000 = 1,2$$

դիտում ենք գրաֆիկը և գտնում φ_1 արժեքը՝

$$\varphi_1 = 0,5$$

տեղադրելով բանաձևի մեջ՝

$$\eta = 1 + 0,50 (1,5 - 1) = 1,25$$

ՌԵԼԻԵՖԻ ԳՈՐԾԱԿՑԻ ՀԱՇՎԱՐԿ

«ՍԻՆՈՀԻԴՐՈ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ Հայաստանյան Մասնաճյուղի
Արտադրական հրապարակ N 2

Ռելեֆի գործակիցը որոշվում է՝

$H = 5$ մ - արտանետման ամենաբարձր աղբյուրը

$H_0 = 100$ մ - տեղանքի բարձրությունը

$X_0 = 2200$ մ - արգելքի կենտրոնից մինչ ձեռնարկություն ընկած
հեռավորությունը

φ_1 - արգելքի եզրի կիսաբայլը

$a_0 = 1500$

Ռելեֆի գործակիցը որոշվում է՝

$$\eta = 1 + \varphi_1 (\eta_m - 1)$$

Գտնել n_1 և արժեքները

$$n_1 = h : H_0 = 5 : 100 = 0,05 \quad n_1 < 0,5$$

$$n_2 = a_0 : H_0 = 1500 : 100 = 15$$

$$n_2 = 15 \quad \text{դեպքում համաձայն աղյուսակի գտնում ենք՝ } \eta = 1,5$$

φ_1 –ը որոշվում է X_0 / a_0 հարաբերությամբ

$$X_0 / a_0 = 2200 : 1500 = 1,5$$

դիտում ենք գրաֆիկը և գտնում φ_1 արժեքը՝

$$\varphi_1 = 0,5$$

տեղադրելով բանաձևի մեջ՝

$$\eta = 1 + 0,50 (1,5 - 1) = 1,25$$

ՀՀ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒԹՅԱՆ ԼԱՅԱԲԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԱՅԷԿՈՄՈՆԻՏՈՐԻՆԳ

**ՀՀ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՐԵՆ
